Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
«25» դեկտեմբեր 2018 թ.
թիվ 3383 - Ա հրամանի

ԾՐԱԳԻՐ
«ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅԱՆ ԲՈՒԺՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Հայաստանի ամերիկյան համալսարանի Ժիրայր և Փաթրիշա Թրփանճեան հանրային առողջապահության ֆակուլտետի Ավետիսեան Օնանեան առողջապահական ծառայությունների հետազոտման և զարգացման կենտրոն,
Ծխելու կանխարգելման եվրոպական ցանց

Մոդուլ 1: **Նիկոտինային կախվածություն**
Ուսումնական ծրագրի 1-ին մոդուլում քննարկվում է, թե ինչու՞ է շատ ծխողների համար այդքան դժվար դադարեցնել ծխելը: Խոսվում է ծխախոտի օգտագործման ֆիզիկական և հոգեբանական գործոնների մասին: Դիտարկվում է նիկոտինային կախվածության ախտաֆիզիոլոգիան և զրկանքի համախտանիշը, որ դժվարեցնում է ծխել դադարեցնելը: Մոդուլ 1-ը ավարտելուց հետո բուժաշխատողները՝

- Կստանան գիտելիքներ նիկոտինային կախվածության ֆիզիկական և հոգեբանական բաղադրիչների վերաբերյալ:
- Կծանոթանան նիկոտինային կախվածության ախտաֆիզիոլոգիային:
- Կճանաչեն զրկանքի ախտանշանները, որոնք կարող են խոչընդոտել ծխելը դադարեցնելուն:

Դասընթացի ելակետային հարցում	14 հարց	
Նախաթեստ	10 հարց	
Ինչու՞ են մարդիկ ծխում	*20 սլայդ*	*596 վրկ. = 9.9 րոպե*
Թեստ՝ Ինչու՞ են մարդիկ ծխում	10 հարց	

Մոդուլ 2: **Ինչպե՞ս օգնել պացիենտին թողնել ծխելը**
էլեկտրոնային ուսումնական ծրագրի 2-րդ մոդուլում քննարկվում է առողջապահական ոլորտի մասնագետների կարևոր դերը պացիենտներին ծխելը դադարեցնելու աջակցելու գործում: Համառոտ քննարկվում է ծխախոտային կախվածության բուժման համար նախատեսված հինգ «A»-երի մոդելը: Նաև քննարկվում են մի քանի գործիքներ, որոնք կարող են օգտակար լինել ծխախոտային կախվածության բուժում տրամադրելիս: Մոդուլ 2-ը ավարտելուց հետո բուժաշխատողները՝

- Կհասկանան առողջապահական ոլորտի մասնագետների կարևոր դերը ծխելը դադարեցնելու գործում:
- Կսովորեն պրակտիկայում ապացույցների վրա հիմնված ծխախոտային կախվածության բուժման ներդրման հմտություններ՝ օգտագործելով 5 «A»-երի ռազմավարությունը:

Կծանոթանան մի քանի հասանելի գործիքների, որոնք կօգնեն պրակտիկայում ծխելը

դադարեցնելու աջակցություն իրականացնելիս:		
Նախաթեստ	11 հարց	
Ինչպե՞ս օգնել պացիենտին թողնել ծխելը	*35 սլայդ*	*791 վրկ. = 13.1 րոպե*
Թեստ՝ Ինչպե՞ս օգնել պացիենտին թողնել ծխելը	11 հարց	
Մոդուլ 3: **Վարքաբանական խորհրդատվություն**		
Նախաթեստ	10 հարց	
3.1. Վարքաբանական խորհրդատվություն (մաս 1) էլեկտրոնային ուսուցման ծրագրի 3.1 մոդուլում քննարկվում է վարքաբանական խորհրդատվության դերը ծխախոտային կախվածության բուժման գործընթացում: Այստեղ անդրադառնում են ապացույցների վրա հիմնված խորհրդատվական մեթոդներին, որոնք նախատեսված են ծխելը դադարեցնել ցանկացող պացիենտների ծխելը թողնելու հավանականությունը մեծացնելու համար: Մոդուլ 3.1-ը ավարտելուց հետո բուժաշխատողները՝ • Կհասկանան վարքաբանական խորհրդատվության դերը ծխելը դադարեցնող հիվանդին աջակցության գործընթացում • Կբարձրացնեն ծխելը դադարեցնելու աջակցության նպատակով օգտագործվող վարքային փոփոխության տեխնիկաների վերաբերյալ գիտելիքների մակարդակը, ներառյալ՝ կոգնիտիվ-վարքային խորհրդատվությունը	*35 սլայդ*	*1007 վրկ. = 33.4 րոպե*
3.2. Վարքաբանական խորհրդատվություն (մաս 2)՝ Ուժեղացնել պացիենտի՝ ծխելը դադարեցնելու մոտիվացիան էլեկտրոնային ուսուցման ծրագրի 3.2-ի մոդուլի շրջանակներում քննարկվում են ծխելը դադարեցնելու մոտիվացիան ուժեղացնող գլխավոր վարքաբանական ռազմավարությունները՝ ներառյալ մոտիվացնող հարցազրույցը և ծխելը	*22 սլայդ*	*950 վրկ. = 31.6 րոպե*

նվազեցնելու մոտեցումը, որոնք օգտագործվում են այն պացիենտների մոտիվացիան ուժեղացնելու համար, ովքեր պատրաստ չեն ծխելը դադարեցնելուն: Մոդուլ 3.2-ը ավարտելուց հետո բուժաշխատողները՝ • Կծանոթանան պացիենտի ծխելը թողնելու մոտիվացիան ուժեղացնող վարքաբանական խորհրդատվության տեխնիկաներին: • Կսովորեն մոտիվացնող հարցազրույցի հիմնական սկզբունքները: • Կծանոթանան ծխելը դադարեցնելու նպատակով ծխելը նվազեցնելու մոտեցմանը:		
Թեստ՝ Վարքաբանական խորհրդատվություն	10 հարց	
Մոդուլ 4: **Դեղորայքային բուժում** էլեկտրոնային ուսուցման ծրագրի 4-րդ մոդուլում անդրադառնում են ծխելը դադարեցնելու առաջին շարքի դեղամիջոցներին, այդ թվում՝ նիկոտինային փոխարինող բուժմանը, բուպրոպիոնին և վարենիկլինին: Սովորեցվում է կլինիկական գործելակերպում այս դեղամիջոցների պատշաճ օգտագործման մասին, որպեսզի առավելագույնի հասցվի հիվանդների շրջանում ծխելը դադարեցնելու հաջողությունը: Ինչպես նաև ներկայացվում է համառոտ ակնարկ ծխելը դադարեցնելու այլ դեղամիջոցների վերաբերյալ, որոնք դառնում են բուժման խոստումնալից տարբերակներ: Մոդուլ 4-ը ավարտելուց հետո բուժաշխատողները՝ • Կծանոթանան ծխելը դադարեցնելու առաջին շարքի դեղամիջոցներին, այդ թվում դրանց պատշաճ օգտագործմանը՝ ծխելը դադարեցնելու գործընթացում առավելագույն արդյունքի հասնելու համար (նիկոտինային փոխարինող բուժում, բուպրոպիոն, վարենիկլին): • Կսովորեն ծխելը դադարեցնելու այլ դեղամիջոցների մասին:		
Նախաթեստ	14 հարց	
Դեղորայքային բուժում	*64 սլայդ*	*2425 վրկ. = 40.4 րոպե*
Թեստ՝ Դեղորայքային բուժում	14 հարց	
Էլեկտրոնային ուսուցման բովանդակության գնահատման ձև	14 հարց	
Դասընթացի վերջնական հարցում	4 հարց	
Ընդհանուր	122 հարց	
	176 սլայդ	95.9 րոպե

Թիրախային լսարան՝ ավագ և միջին բուժաշխատողներ:

Կրթական նյութերը հասանելի են http://elearning-ensp.eu հղումով

«Ծխախոտային կախվածության բուժում» եվրոպական հավատարմագրմամբ էլեկտրոնային դասընթացը մշակվել, ադապտացվել և թարգմանվել է հայերեն Զուարթ Ավետիսեան Օնանեան առողջապահական ծառայությունների հետազոտման և զարգացման կենտրոնի (ԱԾՀԶԿ) և Ծխելու կանխարգելման եվրոպականց ցանցի (European Network for Smoking and Tobacco Prevention (ENSP) համագործակցության շրջանակներում և հավատարմագրվել է European Accreditation Council for Continuing Medical Education (EACCME)-ի կողմից: Այս դասընթացը հնարավորություն է տալիս Եվրոպայի առողջապահական ոլորտի մասնագետներին վերապատրաստվել ծխախոտային կախվածության բուժման ոլորտում՝ համաձայն ապացուցողական բժշկության ամենաարդի փորձառության:

Էլեկտրոնային ուսուցման այս դասընթացը բաղկացած է ներածությունից և 4 մոդուլներից, ինչպես նաև ելակետային հարցումից/վերջնական հարցումից և դասընթացի բովանդակության գնահատման ձևից: Յուրաքանչյուր մոդուլ բաղկացած է նախաթեստից, տեսաձայնագրությունից և հետթեստից:

Հավաստագիր ստանալու համար անհրաժեշտ է, որպեսզի մասնակիցը (բուժաշխատողը) ավարտի բոլոր կրթական նյութերը և ճիշտ լրացնի բոլոր հետթեստերի առնվազն 80%-ը: Ձախողման դեպքում մասնակիցը կարող է կրկնել հետթեստի հանձնումն այնքան անգամ, որքան պահանջվում է նյութը յուրացնելու համար: